Արձանագրություն N 8

Պեկության կարիքների համար անհրաժեշտ համակարգչային տոմոգրաֆիայի սարքերի և անխափան սնուցման աղբյուրների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«27» «Փետրվարի» 2026թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ — Ա. Բաբայան
Հանձնաժողովի անդամներ — Վ.Վահանյան, Ա.Գևորգյան, Հ.Խուրշուդյան

Հանձնաժողովի քարտուղար — Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 10.02.26թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2026 թվականի փետրվարի 20-ին, ժամը 12:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2026 թվականի փետրվարի 27-ին ժամը 12:00-ին: 2026 թվականի փետրվարի 27-ին ժամը 15:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ	armedtechnicallc@gmail.com	02604367
2	«ԱՅ ԷՍ ԱՅ» ՍՊԸ	lsillc.gnumner@gmail.com	02874743
3	« ԷՄՀԱՐ» ՍՊԸ	emharllc@gmail.com	08285951
4	«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ	hgh.company@mail.ru	02634261
5	«Լևոն Միքայելյան» ԱՁ	levonmikaelyan7@gmail.com	28113149
6	«Սիուն» ՍՊԸ	siunllc@gmail.com	00901201
7	Texnology LGP	alexsilov11@gmail.com	435421
8	«Zhejiang Science And Technology C.» Ltd		
9	«Medical Systems Co» LTD		

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Բաբայան)

Բոլոր երեք չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Medical Systems Co» LTD-ի կողմից ներկայացված ծրարում առկա է մեկ ֆայլ անգլերեն լեզվով «Appendix N1», բացակայում է հրավերի պահանջով պարտադիր ներկայացվելիք հավելված 1.3-ը և հայտի ապահովումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Բաբայան)

Գնահատող հանձնաժողովի անդամները 27.02.2026թ. հրավիրված նիստի ժամանակ արձանագրել են, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով սահմանված պարտադիր ներկայացվելիք հայտի ապահովումը և նշված անճշտությունը ենթակա չէ շտկման և հիմք ընդունելով 04.05.2017թ. ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Medical Systems Co» LTD-ի հայտը ենթակա է մերժման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ա. Բաբայան)

27.02.2026թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ ստացվել են հետևյալ հարցումները, որոնց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջներին համապատասխան տրամադրվել են հետևյալ պարզաբանումները.

Հարցում 1, 13.02.2026թ. ժամը 14:39 ուրբաթ օր

«Հարգելի՛ գնահատող հանձնաժողով, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսվում է ձեռք բերել համապատասխանաբար 4 և 6 հատ համակարգչային տոմոգրաֆներ: Նշված չափաբաժիններով ներկայացված տեխնիկական բնութագրերում սահմանված է հետևյալ պահանջը՝ «Համակարգչային տոմոգրաֆ GE Healthcare Revolution Maxima կամ համարժեք Philips Healthcare Philips Incisive CT կամ համարժեք Siemens Healthineers Somatom Go Top»: Վերոնշյալ ձևակերպմամբ պատվիրատուն փաստացի սահմանափակում է գնման ընթացակարգին մասնակցելու հնարավորությունը՝ այն պայմանավորելով միայն երեք կոնկրետ արտադրողների կոնկրետ մոդելների առաջարկմամբ, ինչը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին և գնումների ոլորտում կիրառվող հիմնարար սկզբունքներին:: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը պետք է իրականացվի մրցակցության ապահովման և խրախուսման, ոչ խտրական վերաբերմունքի, հավասարության, համաչափության, հրապարակայնության և թափանցիկության, ինչպես նաև պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման սկզբունքների անմիջական կիրառմամբ և պահպանմամբ: Նույն

օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին կամ համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից: Գնման առարկայի բնութագրերը պետք է նաև ապահովեն հավասար մրցակցային պայմաններ և չառաջացնեն անարդարացի խոչընդոտներ գնումների գործընթացում, ինչպես նաև լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք՝ գնումն իրականացնելու անհրաժեշտությանը: Բացի այդ, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների: Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը: Հետևապես, ապրանքային նշանի, արտադրողի կամ կոնկրետ մոդելի նշումը Օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ իմաստով թույլատրելի է բացառապես այն դեպքում, երբ գնման առարկայի բնութագրումը տեխնիկական չափանիշներով օբյեկտիվորեն հնարավոր չէ, իսկ հակառակ պարագայում գնման առարկան պետք է բնութագրվի տեխնիկական չափանիշներով՝ առանց կոնկրետ արտադրողներով կամ մոդելներով սահմանափակման: Մինչդեռ հարկ ենք համարում ընդգծել, որ հիշյալ գնման ընթացակարգի հրավերին կից ներկայացվել են համակարգչային տոմոգրաֆների մանրամասն տեխնիկական բնութագրերը, որոնք հնարավորություն են տալիս հստակ սահմանել ձեռք բերվող սարքավորումների պահանջները՝ առանց կոնկրետ մոդելների կամ արտադրողների սահմանափակման: Ավելին, նշված տեխնիկական բնութագրերին համապատասխանում են ոչ միայն հրավերով հիշատակված երեք մոդելները, այլ նաև համակարգչային տոմոգրաֆներ արտադրող այլ ընկերությունների մոդելներ, որոնք որոնք ՀՀ օրենսդրության իմաստով հանդիսանում են համարժեք՝ ինչպես տեխնիկական ցուցանիշներով, այնպես էլ գործառնական հնարավորություններով:: Վերոգրյալի համատեքստում՝ արձանագրում ենք, որ տեխնիկական բնութագրերում միայն երեք կոնկրետ մոդելների ընդգրկումը չի բխում օբյեկտիվ անհրաժեշտությունից, չի հանդիսանում իրավաչափ և հանգեցնում է հնարավոր մասնակիցների շրջանակի անհիմն սահմանափակման, ինչպես նաև բարեխիղճ մրցակցության խաթարման: Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք տրամադրել իրավական և օբյեկտիվորեն հիմնավորված պարզաբանում առ այն, թե ինչով է պայմանավորված տեխնիկական բնութագրերում միայն նշված երեք մոդելների ներառումը, ինչպես նաև վերանայել և համապատասխանեցնել տեխնիկական բնութագրերը «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման պահանջներին՝ ապահովելով հավասար մրցակցային պայմաններ:»

Պարզաբանում 1, 16.02.2026թ.

«Հարգելի գործընկեր 1-ին և 2-րդ չափաբաժիններով ձեռք բերման ենթակա համակարգչային տոմոգրաֆների համար սահմանված «Համակարգչային տոմոգրաֆ GE Healthcare Revolution Maxima կամ համարժեք Philips Healthcare Philips Incisive CT կամ համարժեք Siemens Healthineers Somatom Go Top» պահանջը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման պահանջներին: Փաստացի նշված պահանջին համապատասխանում են 3 տարբեր ընկերությունների կողմից արտադրվող համարժեք սարքավորումներ, որոնք բավարարում են պատվիրատուի պահանջին:»:

Հարցում 2, 13.02.2026թ. 16:24 ուրբաթ օր

«Հարգելի գործընկեր ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի հրավերի 1-ին և 2-րդ, չափաբաժինների տեխնիկական բնութագրում նշված է տոմոգրաֆիկ սարքեր , իսկ կից ֆայլերում նշված է Համակարգչային տոմոգրաֆ GE Healthcare Revolution Maxima կամ համարժեք Philips Healthcare Philips Incisive CT կամ համարժեք Siemens Healthineers Somatom Go Top: : Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման հավելվածի 22-րդ կետի Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների: Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը: ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. 2. Գնման առարկայի բնութագրերը՝ 1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար. 2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը. 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը. 4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն . Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: Վերոնշյալ իրավակարգավորումներից բխում է, որ եթե հրավերում հղում է ապրանքի կոնկրետ մոդել , դրանից հետո այն պետք է պարունակի պարունակի «կամ համարժեք» բառերը, որը տվյալ դեպքում բացակայում է : Հիմք ընդունելով վերոգրյալը Խնդրում ենք հայտնել 1. Ինչով է պայմանավորված հրավերի 1-ին և 2-րդ, չափաբաժինների գնման առարկայի տեխնիկական բնութագրում կոնկրետ մոդելների նշումը 2. Ինչու նշված չէ կոնկրետ մոդելների թվարկումից հետո կամ համարժեք բառերը 3. Արդյոք Պատվիրատուի կողմից ընդունելի կլինի նշված

մոդելներից տարբերվող, սակայն տեխնիկական բնութագրով գնման առարկայի բնութագրի պահանջները բավարարող մեկ այլ արտադրողի և մոդելի ապրանք:»:

Պարզաբանում 2, 16.02.2026թ.

«Հարգելի գործընկեր 1-ին և 2-րդ չափաբաժիններով ձեռք բերման ենթակա համակարգչային տոմոգրաֆների համար սահմանված «Համակարգչային տոմոգրաֆ GE Healthcare Revolution Maxima կամ համարժեք Philips Healthcare Philips Incisive CT կամ համարժեք Siemens Healthineers Somatom Go Top» պահանջը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման պահանջներին: Փաստացի նշված պահանջին համապատասխանում են 3 տարբեր ընկերությունների կողմից արտադրվող սարքավորումներ, հստակ ներկայացված են պատվիրատուի համար համարժեք հանդիսացող սարքավորումների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը:»:

Հարցում 3, 17.02.2026թ. 12:26

«Հարգելի Պատվիրատու , հրավերի 3-րդ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրում անխափան սնուցման աղբյուրների արտաքին չափսերը՝ ոչ ավելի քան ԵxԼxԲ 950x600x1800 մմ : Խնդրու եմ տալ պարզաբանում արդյոք՞ Ձեզ համար ընդունելի է մեր կողմից առաջարկվող ապրանքի չափսերը՝ ԵxԼxԲ 850x600x200 մմ:»:

Պարզաբանում 3, 17.02.2026թ.

«Հարգելի գործընկեր:

3-րդ չափաբաժնի համար հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մնացած չափորոշիչների համապատասխանության դեպքում բոլոր այն սարքավորումները որոնց արտաքին չափսերը չեն գերազանցի համապատասխանաբար ԵxԼxԲ 950x600x1800 մմ-ը և հետևաբար կհամապատասխանեն սահմանված «անխափան սնուցման աղբյուրների արտաքին չափսերը՝ ոչ ավելի քան ԵxԼxԲ 950x600x1800 մմ» պայմանին՝ կհանդիսանան հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող:»:

Հարցում 4, 17.02.2026թ., 15:51

«Հարգելի Պատվիրատու, թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ծածկագրով հրապարակված մրցույթի հրավերով սահմանված Հավելված 1 Տեխնիկական բնութագիր սյունակում չափաբաժին 3՝ Անխափան Սնուցման Աղբյուր (ԱՍԱ), Ձեր կողմից նշված Մարտկոցների արկղը նախագծված է հատուկ ԱՍԱ-ի մարտկոցների համար, սակայն նշված չէ հստակ չափս, ուստի խնդրում ենք տրամադրել մարտկոցների արկղի հստակ չափը:»:

Պարզաբանում 4, 17.02.2026թ.

«Հարգելի գործընկեր: Հաշվի առնելով այն, որ հրավերով սահմանված «Մարտկոցների քանակը՝ ոչ պակաս քան 40 հատ, ոչ պակաս քան 100ԱԺ» պայմանին կարող են բավարարել նաև մասնակիցների այն առաջարկները որոնք կպարունակեն 40 հատից ավել և 100ԱԺ-ից ավելի հզոր մարտկոցներ և հետևաբար դրանց համար նախատեսված արկղը կարող է լինել տարբեր չափսերի, ինչպես նաև այն, որ տարբեր արտադրողների կողմից արտադրված մարտկոցների համար նախատեսված արկղը մատակարարվում են թե հավաքված և թե քանդված վիճակում՝ հրավերի տեխնիկական բնութագրում չի սահմանվել մարտկոցների համար նախատեսված արկղի չափսերը: Մարտկոցների համար

նախատեսված արկղը պետք է հնարավոր լինի տեղադրել Անխափան սնուցման սարքի համար նախատեսված սենյակում 1900x700 մմ դռան բացվացքով:»:

Հարցում 5, 19.02.2026թ., ժամը 16:35

«Հարգելի՛ գնահատող հանձնաժողով, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում 1-ին և 2-րդ չափաբաժիններով համակարգչային տոմոգրաֆների ձեռքբերման նպատակով տեխնիկական բնութագրերում սահմանվել է հետևյալ պահանջը՝ «Համակարգչային տոմոգրաֆ GE Healthcare Revolution Maxima կամ համարժեք Philips Healthcare Philips Incisive CT կամ համարժեք Siemens Healthineers Somatom Go Top»: Պարզաբանման պահանջին ի պատասխան ստացվել է պարզաբանում, ըստ որի նշված պահանջը չի հակասում գործող օրենսդրությանը, քանի որ համապատասխանում են երեք արտադրողների սարքավորումներ: Միայն այն հանգամանքը, որ նշված են երեք արտադրողներ, ինքնին չի վերացնում մրցակցության սահմանափակման փաստը, քանի որ օրենքը արգելում է կոնկրետ ապրանքային նշումների և մոդելների հիշատակումը որպես սպառիչ չափանիշ: Սույնով արձանագրում ենք, որ ներկայացված պարզաբանումը իրավաբանորեն անհիմն է և չի համապատասխանում գործող օրենսդրության պահանջներին, չի վերացնում տեխնիկական բնութագրերում առկա իրավախախտումը և չի կարող համարվել բավարար հիմնավորում: I. Օրենսդրության ակնհայտ խախտում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման գործընթացը պետք է իրականացվի՝ • մրցակցության ապահովման և խրախուսման, • ոչ խտրականության, • հավասարության, • համաչափության, • ինչպես նաև մասնակիցների շրջանակի ընդլայնման սկզբունքների պահպանմամբ: Միաժամանակ, նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է սահմանել այնպիսի պահանջներ, որոնք սահմանափակում են մրցակցությունը կամ անհիմն կերպով խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մասնակցությունը գնման գործընթացին: Ավելին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը չպետք է պարունակեն հղում կոնկրետ արտադրողի, ապրանքային նշանի կամ մոդելի, բացառությամբ այն բացառիկ դեպքերի, երբ առանց դրա անհնար է բնութագրել գնման առարկան, իսկ Պատվիրատուի կողմից որևէ հիմնավորում չի ներկայացվել, որը կվկայեր, որ առանց կոնկրետ արտադրողի կամ մոդելի նշման անհնար է բնութագրել գնման առարկան: Նման հիմնավորման բացակայության պայմաններում պահանջը հանդիսանում է օրենքի ուղիղ խախտում: Տվյալ դեպքում նման անհնարինության որևէ հիմնավորում չի ներկայացվել և օբյեկտիվորեն գոյություն չունի, քանի որ համակարգչային տոմոգրաֆները հանդիսանում են ստանդարտացված բժշկական սարքավորումներ, որոնք հնարավոր է լիարժեք բնութագրել բացառապես տեխնիկական և ֆունկցիոնալ բնութագրերով: II. Մրցակցության փաստացի սահմանափակման և խտրականության առկայությունը՝ Տեխնիկական բնութագրում կոնկրետ երեք արտադրողների և երեք մոդելների նշումը փաստացի հանդիսանում է սպառիչ սահմանափակում, որի արդյունքում՝ անհիմն կերպով բացառվում են այլ արտադրողների համարժեք սարքավորումները, սահմանափակվում է մրցակցությունը, խախտվում է հավասարության և ոչ խտրականության սկզբունքը, արհեստականորեն նեղացվում է հնարավոր մասնակիցների շրջանակը: Հատկապես կարևոր է արձանագրել, որ «կամ համարժեք» ձևակերպման օգտագործումը ինքնին բավարար չէ, եթե համարժեքության շրջանակը փաստացի սահմանափակվում է միայն որոշակի

արտադրողների կոնկրետ մոդելներով, ինչպես տեղի է ունեցել տվյալ դեպքում: Նման ձևակերպումը հանդիսանում է ձևական և չի վերացնում մրցակցության սահմանափակման փաստը: III. Դատական ուժի մեջ մտած ակտով հաստատված իրավական դիրքորոշում: Նույնական փաստական և իրավական հանգամանքներով Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից քննված քաղաքացիական գործով՝ Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/8715/02/25 (13-10-2025) դատարանը քննել է գնման տեխնիկական բնութագրում կոնկրետ արտադրողների և մոդելների նշման իրավաչափությունը և արձանագրել, որ նման պահանջը հանդիսանում է մրցակցության սահմանափակում: Մասնավորապես, տվյալ գործով վիճարկվել է տեխնիկական բնութագրի պահանջը, ըստ որի՝ «Ձեռքբերման ենթակա ապրանքը պետք է լինի Guarisco արտադրող ընկերության Phoenix BLU18 մոդելի և/կամ համարժեք համարվող W&H արտադրող ընկերության Lyla 22 մոդելի և/կամ Techno-Gaz industries արտադրող ընկերության Europa B EVO և/կամ Euronda արտադրող ընկերության E10 մոդելի սարքերից որևէ մեկը»: Դատարանը քննության առնելով գործը՝ արձանագրել է, որ նման սահմանափակող պահանջը հանդիսանում է գնման գործընթացի իրավական գնահատման առարկա և ենթակա է դատական վերահսկողության: Հավելենք, որ նշված դատական ակտը օրինական ուժի մտած դատական ակտ է: Վերոգրյալի հիման վրա արձանագրում ենք, որ տվյալ գնման ընթացակարգում պատվիրատուի կողմից սահմանված պահանջը՝ • հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, • հակասում է նույն օրենքի 6-րդ հոդվածին, • հակասում է նույն օրենքի 13-րդ հոդվածին, • հակասում է ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմանը, • սույն էլեկտրոնային աճուրդի հրավերի պահանջներին, • հակասում է ՀՀ դատարանի ձևավորված իրավական դիրքորոշմանը: Հետևաբար տվյալ պահանջը հանդիսանում է ոչ իրավաչափ, հակաօրինական և ենթակա է անհապաղ վերացման: Ելնելով վերոգրյալից՝ պահանջնում ենք • վերանայել և փոփոխել տեխնիկական բնութագրերը՝ բացառելով կոնկրետ արտադրողների և մոդելների սպառիչ նշումը, • Սահմանել գնման առարկայի տեխնիկական բնութագրերը բացառապես տեխնիկական և ֆունկցիոնալ չափանիշներով՝ ապահովելով բաց և հավասար մրցակցություն, • Տրամադրել իրավական հիմնավորում, թե ինչու է օբյեկտիվորեն անհնար համակարգչային տոմոգրաֆի բնութագրումը առանց կոնկրետ արտադրողների և մոդելների նշման: Հ.Գ. Համակարգչային տոմոգրաֆների համաշխարհային շուկայում առկա են բազմաթիվ այլ արտադրողներ, որոնց սարքավորումները տեխնիկապես համարժեք են նշված մոդելներին: Նման սահմանափակող ձևակերպումը օբյեկտիվորեն նեղացնում է շուկան և խաթարում մրցակցային միջավայրը:»:

Պարզաբանում 5, 19.02.2026թ.

«Հարգելի գործընկեր:

Սույն հարթակը նախատեսված է ոչ թե պատվիրատուների և հնարավոր մասնակիցների միջև երկղոսության կամ ընթացակարգերի հրավերների բովանդակության վերաբերյալ դիրքորոշումներ հայտնելու, այլ հրավերում հնարավոր տեղի գտած անհասկանալի և երկակի մեկնաբանվող դրույթները պարզաբանելու համար:

Այնուամենայնիվ՝ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված դիտարկումները հանդիսանում են օրենսդրական նորմերի ոչ ճիշտ մեկնաբանում և սույն ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով ձեռքբերման ենթակա համակարգչային շերտագրերի համար հրավերով սահմանված տեխնիկական

բնութագրերը չեն հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի պահանջներին:»:

Հարցում 6, 19.02.2026թ., 20:58

«Հարգելի գործընկեր, խնդրում ենք պարզաբանել. Ի՞նչ հիմնավորմամբ են ընտրվել ՀՀ ԱՆ-ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի 1-ին և 2-րդ չափաբաժիններով տեխնիկական բնութագրում նշված «Համակարգչային տոմոգրաֆ GE Healthcare Revolution Maxima կամ համարժեք Philips Healthcare Philips Incisive CT կամ համարժեք Siemens Healthineers Somatom Go Top» մոդելները: Ինչպիսի՞ ուսումնասիրություն է իրականացվել մոդելները որոշելիս: Ինչպիսի՞ տվյալների հիման վրա է նման սահմանափակում կիրառվել: Արդյո՞ք իրականացվել է պատշաճ շուկայի ուսումնասիրություն, ե՞րբ, է տվյալ ուսումնասիրությունն իրականացվել: Արդյո՞ք բացահայտվել է այն հանգամանքը, որ նշված 3 մոդելներից ՀՀ-ում կիրառությունը սահմանափակվում է Siemens Healthineers Somatom Go Top մոդելով, իսկ մնացած երկուսը ըստ մեր ունեցած տեղեկությունների չեն կիրառվում: Հակառակը, սահմանափակում եք մրցույթին մասնակցությունը շուկայում առաջատար, ՀՀ-ում տեղադրված առ այսօր բարեհաջող սպասարկվող 25 և ավելի միավոր ՀՏ համակարգերը ներկայացնող ընկերությանը ստեղծելով հակամրցակցային պայմաններ:»:

Պարզաբանում 6, 19.02.2026թ.

«Հարգելի գործընկեր:

Ձեր կողմից բարձրացված հարցերը վերաբերվում են ոչ թե հրավերի բովանդակությանը այլ կարիքի ձևավորման սկզբունքներին և մեխանիզմներին և նպատակ չունեն պարզելու և հստակեցնելու հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված չափորոշիչներից որևէ մեկի համար սահմանված պահանջը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:»:

Հարցում 7, 19.02.2026թ., 20:59

«Հարգելի Գործընկեր, խնդրում ենք պարզաբանել. Ի՞նչ հիմքով են ընտրվել կոնկրետ նշված 3 մոդելները: Երկու ԼՈՏ-ով նշված մոդելների միջև մրցույթի սահմանափակման պարագայում կոնկրետ առավելություն է տրվում մեկ մոդելի, GE Healthcare Revolution Maxima-ին, որը իր դասային կարգով ցածր է մնացած երկուսից, ինչը շատ հստակ երևում է 2-րդ ԼՈՏ-ի պարագայում, որտեղ ըստ տվյալ մրցույթի պայմանների մյուս երկու արտադրողներին ներկայացնող մրցակիցները պետք է տրամադրեն ավելի բարձր դասի մոդել, բնականաբար ավելի թանկ արժեքով: Հորդորում ենք Ձեզ վերանայել նշված մոդելների համակցությունը, չխախտել ՀՀ Գնումների մասին օրենքի պահանջը և հանել սահմանափակումը, ավելացնել «կամ համարժեք» արտահայտությունն՝ առանց մոդելի սահմանափակման, մրցույթի հիմքում դնելով արդար մրցակցությունը և ունեցած աշխատանքային փորձը ՀՀ-ում, առանց որևիցե առումով որակային շեմն իջեցնելու: Հակառակ դեպքում տվյալ մրցույթը միայն ձևական բնույթ է կրում: Մասնավորապես օրենքի 13 հոդված1 5-րդ մասն իմպերատիվ կերպով

սահմանում է՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:»:

Պարզաբանում 7, 19.02.2026թ.

«Հարգելի գործընկեր

Ձեր կողմից բարձրացված հարցերը վերաբերվում են ոչ թե հրավերի բովանդակությանը այլ կարիքի ձևավորման սկզբունքներին և մեխանիզմներին և նպատակ չունեն պարզելու և հստակեցնելու հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված չափորոշիչներից որևէ մեկի համար սահմանված պահանջը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:»

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի պահանջների համաձայն՝ «22. Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների: Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը:»:

Հարցում 8. 19.02.2026թ., 20:59

«Հարգելի գործընկեր, Խնդրում եմ պարզաբանել. ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ծածկագրով ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏՈՄՈԳՐԱՖԻԱՅԻ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ԱՆԽԱՓԱՆ ՍՆՈՒՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ հակադարձ աճուրդին վերաբերող < Հարգելի Պատվիրատու, թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ծածկագրով հրապարակված մրցույթի հրավերով սահմանված Հավելված 1 Տեխնիկական բնութագիր սյունակում չափաբաժին 3՝ Անխափան Սնուցման Աղբյուր (ԱՍԱ), Ձեր կողմից տրված պարզաբանման մեջ (Հարց 4 - Պատասխան 4) նշված է, որ "Մարտկոցների համար նախատեսված արկղը պետք է հնարավոր լինի տեղադրել Անխափան սնուցման սարքի համար նախատեսված սենյակում 1900x700 մմ դռան բացվածքով": Խնդրում եմ պարզաբանել, որ պատճառով է այս դեպքում սահմանափակում տրվում "ԱՍՍ-ի արտաքին չափսերը՝ ոչ ավելի քան ԵxԼxԲ 950x600x1800 մմ":»:

Պարզաբանում 8, 19.02.2026թ.

«Հարգելի գործընկեր

Ձեր կողմից բարձրացված հարցերը վերաբերվում են ոչ թե հրավերի բովանդակությանը, այլ կարիգի ձևավորման սկզբունքներին և մեխանիզմներին և նպատակ չունեն հստակեցնելու հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված չափորոշիչներից որևէ մեկի համար սահմանված պահանջը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:»:

Հարցում 9, 19.02.2026թ. 21:00

«Հարգելի գործընկեր, Խնդրում եմ պարզաբանել ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ծածկագրով ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏՈՄՈԳՐԱՖԻԱՅԻ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ԱՆԽԱՓԱՆ ՍՆՈՒՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ հակադարձ աճուրդին վերաբերող < Հարգելի Պատվիրատու, թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ծածկագրով հրապարակված մրցույթի հրավերով սահմանված Հավելված 1 Տեխնիկական բնութագիր սյունակում չափաբաժին 3՝ Անխափան Սնուցման Աղբյուր (ԱՍԱ), նշված է "Մարտկոցների քանակը՝ ոչ պակաս քան 40հատ, ոչ պակաս քան100ԱԺ", այսինքն հաստատուն հոսանքի (DC) նվազագույն լարումը 480Վ (40x12Վ): Նույն Հավելված 1 Տեխնիկական բնութագիր սյունակում չափաբաժին 3՝ Անխափան Սնուցման Աղբյուր (ԱՍԱ), նշված է "ԱՍԱ-ն պետք է կարողանա աշխատել 192Վ-240Վ տիրույթի (կառավարվող) մարտկոցների հաստատուն հոսանքից:" Խնդրում եմ պարզաբանել ինչպես են համատեղվում այս երկու պահանջները:»:

Պարզաբանում 9, 19.02.2026թ.

«Հարգելի գործընկեր

Ձեր կողմից նշված 40x12Վ = 480Վ բանաձեվը կիրառելի է բոլոր 40 մարտկոցների հաջորդաբար միացման դեպքում: 2x20 x12Վ միացման եղանակով (որտեղ իրար զուգահեռ միացվում են երկու խումբ մարտկոցներ՝ յուրաքանչյուր խմբում 20-ական հաջորդաբար միացված մարտկոցներով) գումարային ընդհանուր լարումը կկազմի 240Վ:»:

Հարցում 10, 20.02.2026թ., 10:08

«Հարգելի գործընկեր , Ձեր նախորդ պարզաբանումից հասկանալի է դառնում , որ հրավերով չի սահմանափակվում մատակարարի կողմից մատակարարվող մարտկոցային կայանի չափը՝ << Հարգելի գործընկեր: Հաշվի առնելով այն, որ հրավերով սահմանված «Մարտկոցների քանակը՝ ոչ պակաս քան 40 հատ, ոչ պակաս քան 100ԱԺ» պայմանին կարող են բավարարել նաև մասնակիցների այն առաջարկները որոնք կպարունակեն 40 հատից ավել և 100ԱԺ-ից ավելի հզոր մարտկոցներ և հետևաբար դրանց համար նախատեսված արկղը կարող է լինել տարբեր չափսերի, ինչպես նաև այն, որ տարբեր արտադրողների կողմից արտադրված մարտկոցների համար նախատեսված արկղը մատակարարվում են թե հավաքված և թե քանդված վիճակում՝ հրավերի տեխնիկական բնութագրում չի սահմանվել մարտկոցների համար նախատեսված արկղի չափսերը: Մարտկոցների համար նախատեսված արկղը պետք է հնարավոր լինի տեղադրել Անխափան սնուցման սարքի համար նախատեսված սենյակում 1900x700 մմ դռան բացվացքով:>> ապա ինչու է սահմանափակված

անխափան սնուցման սարքի չափսը : Եթե այն մեծ լինի ձեր կողմից նշված չափսերից ,բայց անցնի ձեր կողմից նշված դռան բացվածքով ՝ 1900x700 մմ:»:

Պարզաբանում 10, 20.02.2026թ.

«Հարգելի գործընկեր Ձեր կողմից բարձրացված հարցերը վերաբերվում են ոչ թե հրավերի բովանդակությանը, այլ կարիգի ձևավորման սկզբունքներին և մեխանիզմներին և նպատակ չունեն հստակեցնելու հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված չափորոշիչներից որևէ մեկի համար սահմանված պահանջը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:»:

Հարցում 11, 20.02.2026թ. 21:05

«Հարգելի՛ գնահատող հանձնաժողով, ՀՀ առողջապահության նախարարություն կողմից հայտարարված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսվում է համակարգչային տոմոգրաֆների ձեռքբերում: 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում պահանջվող սարքավորման փաստացի տեխնիկական ցուցանիշներին: Մասնավորապես, տեխնիկական պահանջում նշված է. «Z առանցքով դետեկտորի լայնությունը՝ ոչ պակաս քան 40 մմ», մինչդեռ SOMATOM go.Top սարքի Z առանցքով դետեկտորի լայնությունը կազմում է 38,4 մմ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ խնդրում եմ հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ տեխնիկական պահանջները համապատասխանեցնելով սարքավորման իրական տեխնիկական հնարավորություններին:»:

Պարզաբանում 11, 24.02.2026թ. ժամը 13:05

«Հարգելի գործընկեր 2-րդ չափաբաժնով ձեռքբերման ենթակա «GE Healthcare Revolution Maxima կամ համարժեք Philips Healthcare Philips Incisive CT կամ համարժեք Siemens Healthineers Somatom Go Top» համակարգչային տոմոգրաֆների համար սահմանված տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ և Z առանցքով դետեկտորի լայնության համար «ոչ պակաս քան 38,4 մմ»-ի փոխարեն սահմանվել է «ոչ պակաս քան 40 մմ»:

2-րդ չափաբաժնով ձեռքբերման ենթակա «GE Healthcare Revolution Maxima կամ համարժեք Philips Healthcare Philips Incisive CT կամ համարժեք Siemens Healthineers Somatom Go Top» համակարգչային տոմոգրաֆների համար նշված պահանջը պետք է ընդունել հետևյալ խմբագրությամբ՝ «Z առանցքով դետեկտորի լայնությունը՝ ոչ պակաս քան 38,4 մմ»:

Հարցում 12, 20.02.2026թ., 21:05

«Հարգելի՛ գնահատող հանձնաժողով, ՀՀ առողջապահության նախարարություն կողմից հայտարարված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսվում է համակարգչային տոմոգրաֆների ձեռքբերում: Նշված չափաբաժինների տեխնիկական բնութագրերում սահմանված են երեք տարբեր արտադրողների կողմից արտադրված երեք կոնկրետ մոդելներ: Ընդ որում, ինչպես 1-ին, այնպես էլ 2-րդ չափաբաժնում նշված են նույն մոդելների համակարգչային տոմոգրաֆները: Խնդրում եմ պարզաբանել՝ • Ի՞նչ

չափորոշիչներով են ընտրվել նշված կոնկրետ մոդելները, • Արդյոք իրականացվել է շուկայի համապարփակ ուսումնասիրություն, • Արդյոք դիտարկվել է նույն արտադրողների կողմից արտադրված այլ մոդելների մատակարարման հնարավորությունը, որոնց արժեքը կարող է լինել զգալիորեն ցածր, սակայն տեխնիկական և կլինիկական հնարավորություններով լիովին բավարարել պատվիրատուի պահանջները: Հաշվի առնելով արդյունավետ և մրցակցային գնումների իրականացման անհրաժեշտությունը՝ առաջարկում եմ տեխնիկական բնութագրերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ պահպանելով նախընտրելի արտադրողների պահանջը, սակայն առանց կոնկրետ մոդելի սահմանման: Միաժամանակ նպատակահարմար կլինի առավել մանրամասն և գործառնական ձևով նկարագրել պահանջվող տեխնիկական և կլինիկական բնութագրերը: Այդպիսի մոտեցումը կապահովի. • լայն մրցակցություն, • հնարավորինս արդյունավետ բյուջետային ծախս, • ինչպես նաև պատվիրատուի կարիքներին լիովին համապատասխանող սարքավորումների ընտրություն:»:

Պարզաբանում 12, 25.02.2026թ.

«Հարգելի գործընկեր «Հարգելի գործընկեր Ձեր կողմից բարձրացված հարցերը վերաբերվում են ոչ թե հրավերի բովանդակությանը, այլ կարիքի ձևավորման սկզբունքներին և մեխանիզմներին և նպատակ չունեն հստակեցնելու հրավերով հաստատված տեխնիկական բնութագրում ներառված չափորոշիչներից որևէ մեկի համար սահմանված պահանջը: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:»: Միաժամանակ Ձեր՝ «տեխնիկական բնութագրերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ պահպանելով նախընտրելի արտադրողների պահանջը, սակայն առանց կոնկրետ մոդելի սահմանման» առաջարկի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ այն չի համապատասխանում օրենսդրական պահանջներին, քանի որ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ կոնկրետ արտադրողին, իսկ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի պահանջների համաձայն՝ «22. ... Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը:»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն և 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշումների պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 28.02.2026թ.-ից մինչև 09.03.2026թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բաբայան

Անդամներ՝ _____ Վ. Վահանյան

---------- Ա. Գևորգյան

_____ Հ. Խուրշուդյան

Քարտուղար՝ _____ Հ. Սարգսյան

Գնառաջարկներ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25

Չափաբաժնի համար	Հրաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Ապրանքի անվանումը	Քանակ	Միավորի գին/նախահաշվային	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Միավորի գին	
							Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	1	Medical Systems Co Ltd	տոմոգրաֆիկ սարքեր	4	250,000,000.00	1,000,000,000.00	4000000 USD	0	4000000 USD	98,248,800.00	0	98,248,800.00	24,562,200.00	24,562,200.00
1	2	Լևոն Միքայելյան Ա/Ձ	տոմոգրաֆիկ սարքեր	4	250,000,000.00	1,000,000,000.00	100,000,000.00	0.00	100,000,000.00	100,000,000.00	0.00	100,000,000.00	25,000,000.00	25,000,000.00
1	3	«ԱՅ ԷՍ ԱՅ» ՍՊԸ	տոմոգրաֆիկ սարքեր	4	250,000,000.00	1,000,000,000.00	1,000,000,000.00	0.00	1,000,000,000.00	1,000,000,000.00	0.00	1,000,000,000.00	250,000,000.00	250,000,000.00
1	4	Ար.մեդտեխնիկա ՍՊԸ	տոմոգրաֆիկ սարքեր	4	250,000,000.00	1,000,000,000.00	1,115,000,000.00	0.00	1,115,000,000.00	1,115,000,000.00	0.00	1,115,000,000.00	278,750,000.00	278,750,000.00
1	5	Texnology LGP	տոմոգրաֆիկ սարքեր	4	250,000,000.00	1,000,000,000.00	1,300,000,000.00	0.00	1,300,000,000.00	1,300,000,000.00	0.00	1,300,000,000.00	325,000,000.00	325,000,000.00
1	6	Zhejiang Science And Technology Co. Ltd	տոմոգրաֆիկ սարքեր	4	250,000,000.00	1,000,000,000.00	2,000,000,000.00	0.00	2,000,000,000.00	2,000,000,000.00	0.00	2,000,000,000.00	500,000,000.00	500,000,000.00
2	1	Medical Systems Co Ltd	տոմոգրաֆիկ սարքեր	6	200,000,000.00	1,200,000,000.00	5100000 USD	0	5100000 USD	117,142,800.00	0	117,142,800.00	19,523,800.00	19,523,800.00
2	2	Լևոն Միքայելյան Ա/Ձ	տոմոգրաֆիկ սարքեր	6	200,000,000.00	1,200,000,000.00	120,000,000.00	0.00	120,000,000.00	120,000,000.00	0.00	120,000,000.00	20,000,000.00	20,000,000.00
2	3	«ԱՅ ԷՍ ԱՅ» ՍՊԸ	տոմոգրաֆիկ սարքեր	6	200,000,000.00	1,200,000,000.00	1,200,000,000.00	0.00	1,200,000,000.00	1,200,000,000.00	0.00	1,200,000,000.00	200,000,000.00	200,000,000.00
2	4	Ար.մեդտեխնիկա ՍՊԸ	տոմոգրաֆիկ սարքեր	6	200,000,000.00	1,200,000,000.00	1,217,000,000.00	0.00	1,217,000,000.00	1,217,000,000.00	0.00	1,217,000,000.00	202,833,333.33	202,833,333.33
2	5	Texnology LGP	տոմոգրաֆիկ սարքեր	6	200,000,000.00	1,200,000,000.00	1,560,000,000.00	0.00	1,560,000,000.00	1,560,000,000.00	0.00	1,560,000,000.00	260,000,000.00	260,000,000.00

Չափաբաժնի համար	Հրաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Ապրանքի անվանումը	Քանակ	Միավորի գին/նախահաշվային	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Միավորի գին	
							Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
2	6	Zhejiang Science And Technology Co. Ltd	տոմոգրաֆիկ սարքեր	6	200,000,000.00	1,200,000,000.00	3,000,000,000.00	0.00	3,000,000,000.00	3,000,000,000.00	0.00	3,000,000,000.00	500,000,000.00	500,000,000.00
3	1	Medical Systems Co Ltd	անխափան սնուցման աղբյուրներ	10	10,000,000.00	100,000,000.00	1000000 USD	0	1000000 USD	52,903,200.00	0	52,903,200.00	5,290,320.00	5,290,320.00
3	2	ԷՄՀԱՐ ՍՊԸ	անխափան սնուցման աղբյուրներ	10	10,000,000.00	100,000,000.00	83,335,000.00	16,667,000.00	100,002,000.00	58,000,000.00	11,600,000.00	69,600,000.00	5,800,000.00	6,960,000.00
3	3	Սիուն ՍՊԸ	անխափան սնուցման աղբյուրներ	10	10,000,000.00	100,000,000.00	83,333,300.00	16,666,660.00	99,999,960.00	83,333,300.00	16,666,660.00	99,999,960.00	8,333,330.00	9,999,996.00
3	4	ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	անխափան սնուցման աղբյուրներ	10	10,000,000.00	100,000,000.00	83,333,330.00	16,666,666.00	99,999,996.00	83,333,330.00	16,666,666.00	99,999,996.00	8,333,333.00	9,999,999.60
3	5	Texnology LGP	անխափան սնուցման աղբյուրներ	10	10,000,000.00	100,000,000.00	130,000,000.00	0.00	130,000,000.00	130,000,000.00	0.00	130,000,000.00	13,000,000.00	13,000,000.00
3	6	Zhejiang Science And Technology Co. Ltd	անխափան սնուցման աղբյուրներ	10	10,000,000.00	100,000,000.00	500,000,000.00	105,000,000.00	605,000,000.00	500,000,000.00	105,000,000.00	605,000,000.00	50,000,000.00	60,500,000.00